5) Գրադարանապետը հաստատւում է նախարարների խորհրդից Հանրային Կրթութեան և Արուեստի նախարարի առաջարկած թեկնածուների այն ցանկից, որ կազմում է գրադարանի խորհուրդը:

6) Գրադարանապետի աւագ օգնականին և օգնականներին ու քարտուղարին նշանակում է Հանրային Կրթութեան նախարարը գրադարանապետի ներկայացրած թեկնածուներից:

Ծանօթութիւն.— Գրադարանապետի աւագ օգնականի, օգնականների և քարտուղարի պաշտօն ստանձնել կարող են բարձրագոյն կրթութեան տէր կամ համապատասխան գիտական պատրաստութիւն ունեցող անձինք:

7) Գրադարանապետը, իր օգնականներն ու քարտուղարը միասին կազմում են գրադարանի վարչութիւնը, որը մշակում և լուծում է գրադարանի վարչական տնտեսական ընթացիկ հարցերը:

8) Խորհրդի և վարչութեան նախագահն է գրադարանապետը, իսկ նրա բացակայութեան դէպքում աւագ օգնականը:

9) Գրադարանից ոչ մի գիրք դուրս չի տրւում. գրքերից կարելի է օգտուել միայն գրադարանում: Ձեռագրերից և հազագիւտ գրքերից գրադարանում օգտուելու համար անհրաժեշտ է ստանալ յատուկ թոյլտուութիւն գրադարանապետից:

10) Պետական Հանրային գրադարանի համար արտասահմանից ներմուծւող գրքերը ազատ են մաքսից:

11) Պետական Հանրային գրադարանը իրաւունք ունի պոստով յղելու առանց որև է վճարի բաց նամակներ, փակ նամակներ մինչև մէկ ֆունտ, փաթեթներ մինչեւ չորս ֆունտ և անգնահատ ծանրոցներ մինչև մէկ փութ:

12) Պետական Հանրային գրադարանն ունի իր կնիքը այս վերտառութեամբ. «Հայաստանի Հանրային Գրադարան»:

13) Նախորդ տարւայ հաշուետուութիւնը և յաջորդ տարւայ նախահաշիւը կազմում է գրադարանի վարչութիւնը և Խորհրդի հաստատելուց յետոյ մատուցանում է Հանրային Կրթութեան և Արուեստի նախարարին:

14) Պետական Հանրային գրադարանը հրատարակում է տեղեկագրեր, գրացուցակներ, և մատենագրութեան ու գրադարանագիտութեան հետ կապ ունեցող այլ աշխատութիւններ:

(Հաստատուած է 1920թ. մարտ 24-ին)